Հայաստանի Հանրապետության Կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության Կառավարության միջև Տեղեկատվական և Հաղորդակցման Տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ

ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր)

- **Ցանկանալով** ուսումնասիրել հաղորդակցման և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում երկկողմ հարաբերությունների բարելավման և տարբերակման հնարավորությունները,
- **Հետաքրքրված լինելով** երկկողմ համագործակցության ընդլայնմամբ և զարգացման խթանմամբ,
- **Ճանաչելով երկու երկրների**՝ որպես միջազգային հանրության անդամների, պարտավորությունները ՏՀՏ-ների օգնությամբ արդի միջազգային խնդիրների և Կայուն Զարգացման Աճի համար ներկայիս և տևական լուծումների որոնման նպաստման գործում,
- **Նշելով** երկու երկրների միջև համագործակցության պատմությունը՝ Հաղորդակցման և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության միջոցով,
- **Հավաստիացած լինելով** երկու երկրների միջև ընդլայնված գործընկերության հիմնման կարևորությամբ,
- **Հավատալով**, որ նման համագործակցությունը կծառայի իրենց փոխադարձ շահերին և կաջակցի երկու երկրներում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների զարգացմանը՝ որպես նպաստող գործիք,
- **Որոշելով** ուսումնասիրել շուկայական նոր հնարավորությունները՝ օգտվելով երկու երկրների և նրանցից յուրաքանչյուրի կողմից կնքված առևտրային համաձայնագրերից և հայկական ու եգիպտական տեխնոլոգիական ընկերությունների նոր շուկաներ բացահայտ մուտք գործելու տարբեր արտոնությունների ստեղծումից, ինչպիսիք են Եվրասիական տնտեսական միության շուկան, ինչպես նաև Մինջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի ու Աֆրիկայի շուկաները:

Համաձայնեցին ներքոնշյալի վերաբերյալ.

Հոդված 1

Փոխըմբռնման հուշագրի առարկան

- Սույն փոխըմբռնման հուշագրի առարկան շահերի որոշակի բնագավառներում երկու Կողմերի միջև տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության ամրապնդումն ու խթանումն է:

Հոդված 2

Համագործակցության ոլորտներ

1. **[1]Կարողությունների կառուցում** ՏՏ մասնագետների, ոչ մասնագետների և ընկերությունների համար. երկու երկրներում գոյություն ունեցող խնդիրների ուսումնասիրում (օրինակ՝ Եգիպտոսում Ծրագրային ապահովման ինժիներական իրավասությունների կենտրոն (SECC) և Ազգային իրավասությունների շրջանակ (NCF)), խորհրդակցություններ/գնահատում իրականացնելու նպատակով Ծրագրային ապահովման ինժիներական իրավասությունների կենտրոնի ծրագրերի շրջանակներում գնահատող մարմինների միջոցով համագործակցություն, հայկական ծրագրային ապահովումների թեստավորման խորհրդի հիմնման գործում Հայաստանին աջակցության ցուցաբերում, կիբեռանվտանգության վերապատրաստման ծրագրերի անցկացում, ստանդարտացման զարգացում և աշխատուժի զարգացում:
2. **Էլեկտրոնային ստորագրություն:** Գիտելիքների փոխանակման սեմինարների միջոցով փորձը ընդլայնելու նպատակով փորձի փոխանակում երկու երկրների կողմից:
3. **Նորարարություն և ձեռնարկատիրություն:** Եգիպտոսի տեխնոլոգիական պարկերից մեկում հայ-եգիպտական նորարարական կլաստերի հիմնում՝ երկու երկրների նորարարական հաստատությունների՝ Տեխնոլոգիաների նորարարական և ձեռնարկատիրական կենտրոնի (TIEC) և Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամի (EIF) միջև՝ կապի ստեղծում, ինկուբատորների և ստարտափերի համար փոխանակման ծրագրեր, մշակողմերի և ձեռնարկատերերի համար համատեղ մրցույթներ, հաքաթոններ, փոքր և միջին ձեռնարկությունների համար համատեղ ծրագրերի մեկնարկում, ձեռնարկատերերի համար արագացված ծրագրերի իրականացում, նորարարական ֆոնդերի և համացանցով դրամահավաք-ֆինանսավորման համար համատեղ առաջարկների դիտարկում, միջազգային կորպորացիաների և կազմակերպությունների կողմից առաջարկված վենչուրային հիմնադրամների համար համատեղ առաջարկների նախագծում և ներկայացում, Հորիզոն 2020 և այլ ԵՄ ՏՀՏ ֆինանսավորման նախագծերի ծրագրերի շրջանակներում կոնսարցիումներ ստեղծելով նորարարություններում և հետազոտություններում համատեղ գործունեություններից և նախաձեռնություններից շահույթի ստացում:
4. **Տեխնոլոգիական պարկ:** Հայկական տեխնոլոգիական պարկերից մեկում եգիպտական տեխնոլոգիական պարկերի համար հարթակի հիմնում և հակառակը. որպես երկու երկրների փոքր և միջին ձեռնարկությունների և ստարտափների փորձի փոխանակումն ու աշխատանքը դյուրացնելու և առանց ճգնաժամի տնտեսական աճի դանդաղեցումը հեշտացնելու մեխանիզմ օգտագործելու համար:
5. **Խելացի կրթություն/ուսուցում:** Առանցքային թեմաներին, այդ թվում՝ միկրոէլեկտրոնային, համակարգչային գիտությունների և ռոբոտաշինության և այլնին նվիրված խելացի կրթությունում փորձի փոխանակման նպատակով գիտելիքների փոխանակման սեմինարների կազմակերպում, ձեր ուսանողների համար ծառայող հայաստանյան խելացի կրթության կենտրոնների փորձի փոխանակում, բարձրագույն ուսումնական հաստատություններում համատեղ լաբարատորիաների

հիմնում:

6. **Կիբեռանվտանգություն:** ՀՀ հավաստագրման կենտրոնի և բոլոր կիբեռանվտանգության ենթակառուցվածքների ուժեղացման հարցում Հայաստանին օժանդակության տրամադրում՝ ներառյալ անհրաժեշտ աշխատուժի վերապատրաստում:
7. **Խելացի կառավարում:** Դիտարկելով երկու երկրների փորձը ՏՀՏ-ն քաղաքացիների համար օգտագործելու և էլեկտրոնային ծառայությունների[2] ինտեգրման գործում՝ ուսումնասիրել համագործակցության հնարավորությունները իրերի համացանցի զարգացման համար՝ հատուկ շեշտադրություն կատարելով խելացի քաղաքների համար լուծումներ տրամադրելու հարցում: Խելացի քաղաք նորարարական հանգույցի հիմնման հնարավորությունների քննարկում:
8. **Ստարտափներ և համատեղ ծրագրեր:** Խրախուսել Հայաստանի և Եգիպտոսի ստարտափերի միջև համատեղ գործունեությունը և երկու երկրներում նշանակալի իրադարձություններին մասնակցությունը: ՏՀՏ-ի և ճարտարագիտական ոլորտներում համագործակցությունը խթանելու նպատակով՝ մշակել և իրականացնել համատեղ դրամաշնորհային ծրագրեր, համատեղ մրցույթներ: Համատեղ մրցույթների, Հաքաթոնների կազմակերպում՝ երկու երկրներում նորարարական էկոհամակարգերը խթանելու նպատակով:

Համագործակցության այլ ոլորտներ. ինչպես երկու Կողմերն համատեղ որոշել են:

Հոդված 3

Իրականացման մեխանիզմներ

1. Համագործակցությունը և իրականացումը համակարգելու նպատակով երկու Կողմերի շահագրգիռ կողմերից ձևավորվող բարձրացտիճան հանձնաժողովի ձևավորում:
2. Թվային հարթակի գործարկում, որը թույլ կտա երկու երկրների ընկերություններին ծանոթանալ և համագործակցել:
3. Երկու երկրների համապատասխան ՏՏ միջոցառումներին, ինչպիսիք են՝ Հայաստանում ԱրմԹեք համաժողովը և Դիջիտեք ՏՀՏ էքսպոն, իսկ Եգիպտոսում Կահիրե ՏՀՏ-ն, փոխադարձ այցերի իրականացում և երկկողմանի մասնակցություն:
4. Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համատեղ նախագծերի և ծրագրերի իրականացում:
5. Փորձագետների, տեխնիկների և այլ մասնագետների փոխանակում և երկու Կողմերի կողմից սահմանված համատեղ հետազոտական գործունեությանը և նախագծերին մասնակցության դյուրացում:

Հոդված չորս

Մտավոր սեփականության իրավունքներ

ա) Յուրաքանչյուր կողմ կապահովի սույն փոխըմբռնման հուշագրից բխող համագործակցությունից առաջացած մտավոր սեփականության իրավունքների (այսուհետ՝ ՄՍԻ) համապատասխան պաշտպանությունը՝ համաձայն իրենց համապատասխան օրենքների, կանոնների և կանոնակարգերի, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի, որոնց նկատմամբ երկու կողմերն էլ պարտավորություններ են ստանձնել:

բ) Այն դեպքում, երբ հետազոտությունը իրականացվում է միայն և առանձնապես մի Կողմի կողմից կամ ուսումնասիրության արդյունքները ստացվում են միայն և առանձնապես մի Կողմի ջանքերի միջոցով, առնչվող Կողմը միայնակ պետք է դիմի մտավոր սեփականության շնորհման համար և երբ ստանա մտավոր սեփականությունը, ապա այն բացառապես կպատկանի առնչվող Կողմին:

գ) Այն դեպքում, երբ հետազոտության արդյունքները ստացվել են միասնական ջանքերի արդյունքում, ապա մտավոր սեփականության իրավունքի համար երկու Կողմերը պետք է դիմեն միասին և երբ այն շնորհվի, Կողմերի կողմից այդ իրավունքները կտնօրինվեն միասնական:

դ) Կողմերը չպետք է առանց մյուս Կողմի համաձայնության փոխանցեն սույն փոխըմբռնման հուշագրի ներքո իրականացվող գյուտերից/գործողություններից առաջացած մտավոր սեփականության իրավունքից բխող որևէ իրավունք կամ պարտականություն որևէ այլ երրորդ Կողմի:

ե) Այն դեպքում, երբ հետազոտության արդյունքները ստացվել են սույն փոխըմբռնման հուշագրի ներքո իրականացվող միասնական գործողությունների միջոցով, Կողմերը պետք է դիմեն որպես համահեղինակներ Մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության համար՝ պայմանով, որ Կողմերն իրենց երկրներում տեխնոլոգիաների առևտրայնացման բացառիկ իրավունքներ ունեն: Ցանկացած այլ երկրում առևտրայնացումը պետք է իրականացվի համատեղ՝ առանձին համաձայնագրի միջոցով:

Հոդված հինգ

Իրավասու մարմիններ

1. Փոխըմբռնման հուշագրի իրականացման համար պատասխանատու իրավասու մարմիններն են լինելու՝

ա) Հայաստանի Հանրապետության կողմից՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն:

բ) Եգիպտոսի Արաբական Հանրապետության կողմից՝ Հաղորդակցման և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն:

գ) Յուրաքանչյուր կողմ պետք է նշանակի «կոնտակտ», որը պատասխանատու կլինի փոխըմբռնման հուշագրի իրականացման մոնիթորինգի համար:

2. Իրավասու մարմինների կամ «կոնտակտների» հետ կապված ցանկացած փոփոխության դեպքում կողմերը կտեղեկացնեն միմյանց տասնչորս (14) օրվա ընթացքում:
3. Կողմերը հիմնում են բարձրաստիճան հանձնաժողով բաղկացած հավասար քանակությամբ կողմերի ներկայացուցիչներից:

Հոդված 6

Վեճերի կարգավորում

Սույն Փոխըմբռնան Հուշագրի մեկնաբանման կամ կիրարկման ընթացքում ծագող ցանկացած վեճ պետք է կարգավորվի բարեկամաբար՝ կողմերի միջև խորհրդակցությունների միջոցով և այնպիսի եղանակով, որը կծառայի նրանց փոխադարձ շահերին:

Հոդված 7

Փոփոխություններ և լրացումներ

Սույն փոխըմբռնման հուշագրում Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ կարող են իրականացվել փոփոխություններ և լրացումներ: Փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում Հոդված 9-ում նշված կարգով:

Հոդված 8

Տեղեկատվության բացահայտում

Կողմերից ոչ մեկը չպետք է բացահայտի կամ տարածի մյուս Կողմի կողմից սույն փոխըմբռնման հուշագրի ներքո համագործակցության գործունեության իրականացման ընթացքում տրամադրված տեղեկատվությունը երրորդ

Կողմին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա գրավոր ձևով թույլատրվում է նման տեղեկատվությունը տրամադրող Կողմի կողմից կամ երբ դա պահանջվում է այդ Կողմի երկրի գործող օրենսդրությամբ:

Հոդված 9

Ուժի մեջ մտնելը, գործողության ժամկետը և դադարեցումը

1. Սույն փոխըմբռնման հուշագիրը պետք է ուժի մեջ մտնի վերջին ծանուցագիրը ստանալու օրը, որով Կողմերը պետք է գրավոր և դիվանագիտական ուղիներով միմյանց տեղեկացնեն դրա ուժի մեջ մտնելու համար իրենց ազգային օրենսդրությամբ պահանջվող օրենսդրական ընթացակարգերը ավարտելու մասին: Սույն փոխըմբռնման հուշագիրը չպետք է համարվի միջազգային համաձայնագիր և չպետք է ստեղծի միջազգային օրենսդրությամբ ղեկավարվող օրենսդրական պարտավորություններ:
2. Այն պետք է ուժի մեջ մտնի 3 տարով և պետք է ինքնաբերաբար երկարաձգվի հետագա (3) տարիներն ընդգրկող ժամանակահատվածի համար:
3. Փոխըմբռնման հուշագրի իրականացումը պետք է կատարվի համաձայն յուրաքանչյուր երկրի գործող օրենքների ու կանոնակարգերի և Կողմերի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների:
4. Յուրաքանչյուր կողմ կարող է դադարեցնել սույն փոխըմբռնման հուշագիրը առնվազն երեք ամիս առաջ իր այդ մտադրության մասին դիվանագիտական ուղիներով գրավոր ձևով ծանուցելով մյուս Կողմին:

Ստորագրված է Կահիրեյում 2018թ.....-ի .....-ին երեք օրինակներով՝ արաբերեն, հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին:

Հայաստանի Հանրապետության **Է**

կառավարության կողմից

[1] Սպասվում է քննարկում Ազգային հեռահաղորդակցության կարգավորման մարմնի հետ

[2] Խելացի քաղաքներ՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գործակալության կողմից հաստատման ենթակա տեղեկատվության և փորձի (և հետագայում մշակել և զարգացնել ինչպես հարմար է) փոխանակում